



Գ. ՏԱՐԻ ԹԻՒ 30 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1928

**«ԱՆՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ 2Է, ՀԱՊԱ ԻՆՉ Է»**  
Կ Ա Մ  
**ԱՆՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՄՆԱԲԱՆԵԱՆ**

Անմարտագութիւն բառը՝ ազգասիրութիւն և հայրենասիրութիւն բառերուն չափ, և թեբևս քիչ մըն ալ աւելի, ի չարս կը զործածուի և՛ բոլիշկներուն, և՛ հիւանդներուն կողմէ:

Թէ ինչ հիւանդութիւններ կրնան պահուիլ «անմարտագութեան» տակ, ծանօթացնենք յետագոյ կարճ տասնարաննայոյ՛:

1.— Ուտելէզ վերջը ստամոքսից թթուածութիւնը և ցաւը, քչիկ մը պիւրարզօնանով (սոտա) ցաւին և թթուածութեան մեղմացումը՝ անմարտագութիւն չէ, այլ յաճախ ստամոքսի կեղ (վէրք) է:

2.— Անօթնալուծ պէս, ստամոքսից վրայ՝ աջ կողոսկրներուն տակը կրծող ցաւը, և բան մը ուտելուց պէս անօթնալուծ անհետացող և քիչ յետոյ կրկնուող ցաւը՝ անմարտագութիւն չէ, այլ նախաղիւի կեղ է:

3.— Ծանր ճաշ մը ուտելէ վերջը ստամոքսին ուռնալը, բուքի արտաբառումը և բերնի անհամութիւնը՝ անմարտագութիւն չէ, այլ մաղձատարակին բարբոքումն է որ Հայերուն մեծ մասին անբաժան բնկերն է:

4.— Փառաւոր բնթրիքէ մը վերջ աջ կողոսկրներուն տակէն սկսող և դէպի կանակն ու աջ ուսը զարնող ցաւն ու փսխունքը՝ անմարտագութիւն չէ, այլ մաղձաքարերու դոյութեան ահազանդն է:

5.— Ընթանկ լեղումը, ծանր շունչը, բերնի լեղիւթիւնը, ախորժակի պակասը՝ անմարտագութիւն չէ, այլ հաստ աղիքին ազբանոցի վերածուիլն է, այսինքն պնդութիւնն է:

6.— Պորտին աջ կողմէն սկսելով աջ աճուկին մօտերը տեղա-  
ւորուող ցաւը որ փսխուենք ալ կը պատճառէ՝ անմարսողութիւն չէ,  
այլ կուրաղետապ է:

7.— Պորտին ըտլորտիքը սկսող սնաստիկ ցաւը և անընդհատ  
փսխուենքը և չքակուող պնդութիւնը՝ անմարսողութիւն չէ, այլ  
աղիքներու հանգոյց է որ անմիջապէս չգարմանուելու պարագային  
ստոյգ մահ կը բերէ:

8.— Գիշերը ուշ ատեն տուն վերադառնալու սովորութիւն ու-  
նեցող ազատամիտ օրիորդներուն (թերեւս մի քանի վիժեցումներէ  
վերջ) աճուկներուն վերև զգացուող սուր և խորունկ ցաւերը՝ խակ  
խնձոր ուտելու անմարսողութիւն չէ, այլ ձուարաններու և ֆալ-  
լօպեան խողովակներու բորբոքում է:

9.— Միջին տարիքի մէջ գտնուող անհատներուն կշիռքէ պակ-  
սիլը, խահուէազոյն փսխուենքը և ստամոքսային ցաւերը՝ անմարսո-  
ղութիւն չէ, այլ ստամոքսի քաղցկեղ է:

10.— Յիսունը անցած մարդու մը սուր եւ հատու որովայնա-  
յին խիթերը, ժամանակին սիֆիլիզ ունեցած տարիքոտ պապայի մը  
ստամոքսային խիթերը՝ անմարսողութիւն չէ, այլ Թապէս կոչուած  
ողնուղեղային հիւանդութեան նախանշանն է:

11.— Ներկարարներու որովայնային խիթերը՝ անմարսողու-  
թիւն չէ, այլ կապարով թունաւորում է:

12.— Մանուկի մը որովայնային ցաւը՝ անմարսողութիւն չէ,  
այլ նոր սկսող թոքատապի մը գուժկանն է:

13.— Շարունակ փսխող եւ ձիգ որովայնով պառկած մանուկին  
ցաւը սողուճամի անմարսողութիւն չէ, այլ հիւճախտային ուղեղա-  
տապ է:

14.— Ծանր ճաշերէ վերջ որովայնային անհանգստութիւնները  
և ցաւերը՝ անմարսողութիւն չեն, այլ յաճախ կիսկատար աղեթա-  
փութիւններու (hernie) արգիւնք են:

15.— Ասիկա ցուցանէ, թէ անմարսողութիւնը կատակ չէ: Պէտք  
է պատճառին թափանցել: Ընդրիտ խտտաճանաչութիւն, յետոյ դար-  
մանում և ոչ թէ տաք աննուխի ջուր և տաք կղմինտր:

Որ ունիցի ունկն լսելոյ, լուիցէ:

Պոստըն

Բժ. Ա. ԱՐԷԼԵԱՆ

ՄԻ ՄՈՌՆԱՐ «ԲՈՒՓԱՆՔ»Ը

ԾԱՆՕԹԱՑՆԵԼ ԲԱՐԵԿԱՄԵՆԲՐՈՒԴ